Լ Բ.

Այս գիշեր ի դուրս ելայ, թուխ ամպ էր ’ անուշ կու ցօղայ.
Զիմ եարն ալ պառկած տեսայ ու կանանչ եօղրան ի վըրայ.
Ոտկունքս առուդիր արի թէ մտնում ի ծոցըն նորա.
Գլխարկն ալ ի վեր իկալ, թուխ աչօքն արաւ թէ՝ Գընա՛,
Սեւ օձ կայ ի յիմ ծոցիս որ չելնէ ու ղաստի ջանայ:
Հառաչելով ի յետ դարձայ թէ՝ Սիրե՛մ զսուրաթըն նորա:

Լ Գ.

Շատ պատկեր ի քո սուրաթդ, աննըման զէտ քուկը չիկայ.
Հանց աղուոր պատկեր ունիս որ կ’ասեն թէ տէրն է Մըսրայ.
Ուներըդ եկեղեցոյ զէտ կամար ի վեր քաշած է,
Աչերդ է կանթեղ նըման, ի կամարն ի վար կախած է:

Լ Դ.

Զինչ եղէգն ի շամպին մէջ կու ճոճայ ան քո անձըն է.
Քո մէջքդ է բարակ ’ւ երկան եւ պօյիկդ է սալւի որվան.
Ջուր անմահութեան կ’ասեն՝ այն ի քո ծոցէն կու բըխէ.
Երնեկ ես անոր կուտամ որ դընէ զբերանն ու խըմէ:

Լ Ե.

Մահալովդ ի վար կուգ’ի՝ զէտ հազար դարիպ մոլորած,
Իմ եարս ալ ի դէմս ելաւ՝ զէտ հազար լուսին բոլորած.
Զետ սըրած կտրուկ դանակ անողորմ ի սրտիս էած.
Ո՛չ խիղճ ի մըտին ձըգեց, ո՛չ յիշեց աւոր մ՚աղուհաց:

Լ Զ.

Գիշե՛ր, դու յերկան կեցիր, տարեկ մի եղիր, թէ կարես.
Իմ եարն ինծի հիւր եկեր, գէմ հազար տարու՝ թէ գիտես.
Առաւօ՛տ, դու զատ կեցիր, որ ըզմեր խաղընն կ’աւիրես.
Գաս ըզլոյսն ի վրայ բերես ու զիս իմ եարէս բաժանես:

Լ Է.

Զիմ եարն յիսնէ զատեցին, թոռմեցայ զէտ վարդի տերեւ.
Տարին այլ երկիր հանին, չիցաթեց իմ սիրտըս արեւ:
Երթամ աղաչեմ զԱստուած որ տայ ինձ աղաւընու թեւ,
Թռչիմ ու հաւան ելնում իմ եարին երդիցն ի վերեւ,
Աչացս ալ արցունք թափեմ զէտ թաթաւ ու զէտ ըզանձրեւ.